# ԵՊԲՀ Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոն

## Հանրային առողջության «Առողջապահության կազմակերպում և կառավարում» մագիստրոսական ծրագրի դասախոսների հարցման վերլուծություն

Հարցման նպատակն էր գնահատել կրթական ծրագրի իրականացման արդյունավետությունը, բացահայտել ուժեղ կողմերն ու առկա խնդիրները, ինչպես նաև նախանշել զարգացման առաջնահերթությունները: Արդյունքները հնարավորություն են տալիս ձևավորել ամբողջական պատկեր ծրագրի որակի ապահովման ներկավիճակի վերաբերյալ:

**Հարցման մասնակցություն**

Հարցմանը մասնակցել է 26 դասախոս, ինչը կազմում է մոտ 76% մասնակցություն:

Այս ցուցանիշը համարվում է բավական բարձր և ապահովում է ստացված տվյալների հարաբերական վստահելիությունը: Մասնակցության բարձր մակարդակը վկայում է, որ դասախոսական կազմը հետաքրքրված է կրթական ծրագրի զարգացման գործընթացով և պատրաստ է մասնակցել որակի ապահովման մեխանիզմներին:

1. **Կիսամյակ(ներ) և ուսումնական տարի(ներ)** ***(նշել բոլոր կիրառելի պատասխանները)***




2. **Դասավանդման ծավալ**




**3. Դասընթացի պլանավորում և կառուցվածք**

*Ինքնագնահատում (գնահատման սանդղակ 1-5, որտեղ 1 = Լիովին անհամաձայն → 5=Լիովին համաձայն)*




Գրաֆիկի տվյալները ցույց են տալիս, որ դասախոսների մեծամասնությունը բարձր է գնահատում դասընթացների պլանավորման և կառուցվածքի արդյունավետությունը: Գնահատումների հիմնական մասը կենտրոնացած է 4 և 5 միավորների միջակայքում, ինչը վկայում է, որ դասընթացները հիմնականում ունեն հստակ ձևակերպված նպատակներ, տրամաբանական կառուցվածք և բովանդակության հետևողականություն: Սա ցույց է տալիս, որ ծրագրում դասընթացների պլանավորումը իրականացվում է մեթոդապես հիմնավորված և համակարգված ձևով: Միաժամանակ առկա է փոքր մասնաբաժին միջին գնահատականների, ինչը կարող է մատնանշել դասընթացների առանձին բաղադրիչների կամ բովանդակության հետագա կատարելագործման կարիքը:

**4. Դասավանդման իրականացում** *(գնահատման սանդղակ 1-5, որտեղ 1=Լիովին անհամաձայն → 5=Լիովին համաձայն)*




Դասավանդման իրականացման վերաբերյալ գրաֆիկը ցույց է տալիս հիմնականում դրական գնահատականների գերակշռություն: Դասախոսների մեծ մասը գնահատել է դասավանդման գործընթացը 4 կամ 5 միավորով, ինչը վկայում է, որ ուսուցման գործընթացում լայնորեն կիրառվում են ուսանողակենտրոն մոտեցումներ, ակտիվ ուսուցման մեթոդներ և արդյունավետ հաղորդակցություն:

Սա նաև ցույց է տալիս, որ դասախոսները կարողանում են ապահովել ուսանողների ներգրավվածությունը և թեմաների մատչելի ներկայացումը: Միաժամանակ առկա է ցածր և միջին գնահատականների մասնաբաժին, ինչը կարող է կապված լինել ուսանողների տարբեր պատրաստվածության մակարդակի կամ ժամանակային սահմանափակումների հետ:

**5. Գնահատման որակ** *(գնահատման սանդղակ 1-5, որտեղ 1 = Լիովին անհամաձայն → 5=Լիովին համաձայն)*




Գնահատման որակի գրաֆիկը ցույց է տալիս, որ դասախոսները հիմնականում դրական են գնահատում կիրառվող գնահատման մեթոդները (4 և 5 միավորների միջակայք), ինչը ցույց է տալիս, որ գնահատման գործընթացը հիմնականում համապատասխանում է դասընթացի նպատակներին

և ուսումնառության արդյունքներին: Միևնույն ժամանակ որոշ ցածր գնահատականներ կարող են վկայել, որ անհրաժեշտ է գնահատման չափանիշների և գործիքների ավելի հստակեցում, ինչպես նաև ուսանողների համար գնահատման մեխանիզմների ավելի թափանցիկ ներկայացում:

6. **Նորարարություն և թվային գործիքներ**

*(գնահատման սանդղակ 1-5, որտեղ 1 = Լիովին անհամաձայն → 5 =Լիովին համաձայն)*




Նորարարության և թվային գործիքների կիրառման վերաբերյալ գրաֆիկը ցույց է տալիս համեմատաբար ավելի հավասարակշռված գնահատումների բաշխում: Թեև դրական գնահատականները գերակշռում են, սակայն այստեղ ավելի նկատելի է միջին գնահատականների բաժինը: Սա ցույց է տալիս, որ կրթական գործընթացում արդեն կիրառվում են որոշ նորարարական մեթոդներ և թվային գործիքներ, սակայն դրանց կիրառման մակարդակը դեռևս ունի զարգացման և բարելավման կարիք: Հատկապես կարևոր է թվային հարթակների, առցանց գնահատման գործիքների և ինտերակտիվ տեխնոլոգիաների ավելի ակտիվ օգտագործումը:

7. **Մասնագիտական վարքագիծ և հաղորդակցում**

*(գնահատման սանդղակ 1-5, որտեղ 1 = Լիովին անհամաձայն → 5 =Լիովին համաձայն)*




Մասնագիտական վարքագծի և հաղորդակցության վերաբերյալ գրաֆիկը արձանագրել է հարցման ամենաբարձր գնահատականները: Դասախոսների մեծ մասը գնահատել է այս բաղադրիչը առավելագույն կամ բարձր միավորներով, ինչը վկայում է, որ դասախոսական կազմը պահպանում է ակադեմիական և մասնագիտական էթիկայի բարձր չափանիշներ: Այս արդյունքները նաև ցույց են տալիս, որ դասախոսները ցուցաբերում են արդյունավետ հաղորդակցություն ուսանողների հետ, ապահովում են աջակցող ուսումնական միջավայր և նպաստում են ուսանողների ակտիվ մասնակցությանը կրթական գործընթացին:

8. **Ընդհանուր գնահատում** *(գնահատման սանդղակ 1-5, որտեղ 1 = Լիովին անհամաձայն → 5=Լիովին համաձայն)*




9. **Իմ դասավանդման ուժեղ կողմերը**

*Հարցման արդյունքները տես Հավելված 1-ում*

Դասախոսների կողմից առավել հաճախ նշված ուժեղ կողմերը վերաբերում են դասավանդման կառուցվածքային, մեթոդական և բովանդակային կողմերին:

Ամենաբարձր գնահատված ցուցանիշներն են՝

- Դասընթացի հստակ կառուցվածք և տրամաբանական հաջորդականություն – 93%
- Ուսանողների ներգրավվածության խթանում – 90%
- Գործնական հանրային առողջապահական օրինակների օգտագործում – 90%
- Հստակ և հասկանալի բացատրություններ – 86%

Ապացուցահեն և արդի գիտական աղբյուրների ինտեգրում – 86%

Այս արդյունքները ցույց են տալիս, որ ծրագրում դասավանդումը հիմնականում կառուցված է գործնական, ապացուցահեն և ուսանողակենտրոն մոտեցման վրա:

Միաժամանակ համեմատաբար ավելի ցածր են գնահատվել.

- Թվային նյութերի օգտագործում – 62%
- Ժամանակի արդյունավետ կառավարում – 69%
- Հետադարձ կապ – 69%

Սա ցույց է տալիս, որ կրթական գործընթացում թվային տեխնոլոգիաների ինտեգրման և հետադարձ կապի մեխանիզմների զարգացումը բարելավման կարիք ունի:

**10. Դասավանդման ընթացքում հանդիպած դժվարություններ**

*Հարցման արդյունքները տես Հավելված 2-ում*

Դասախոսների կողմից առավել հաճախ նշված խնդիրներն են.

- Ուսանողների նախնական գիտելիքների անհավասար մակարդակ – 66%
- Ժամանակի սահմանափակություն նյութի ամբողջական ներկայացման համար – 48%
- Ուսանողների մոտիվացիայի կամ հաճախելիության խնդիրներ – 35%
- Մեծ խմբեր կամ ծանր դասավանդման բեռնվածություն – 24%

Այս արդյունքները ցույց են տալիս, որ հիմնական դժվարությունները կապված են ոչ այնքան դասախոսների մեթոդական պատրաստվածության, որքան կրթական գործընթացի կազմակերպման և ուսանողների ակադեմիական պատրաստվածության հետ:

Համեմատաբար քիչ են նշվել տեխնիկական խնդիրները (7–14%), ինչը վկայում է, որ նյութատեխնիկական միջավայրը հիմնականում բավարար է:

**11. Նորարարություններ/փոփոխություններ, որոնք իրականացվել են այս տարի**

*Հարցման արդյունքները տես Հավելված 3-ում*

Հարցման տվյալների համաձայն՝ դասախոսները վերջին տարվա ընթացքում իրականացրել են մի շարք նորարարական քայլեր.

Ամենատարածված փոփոխությունները.

- Դասընթացի նյութերի թարմացում – 66%
- Գործնական օրինակների ավելացում – 66%
- Ինտերակտիվ գործունեությունների իրականացում – 59%
- Ուսանողների արձագանքի հիման վրա փոփոխություններ – 52%
- Նոր գիտական տվյալների ինտեգրում – 48%

Այս ցուցանիշները ցույց են տալիս, որ ծրագրում առկա է շարունակական բարելավման մշակույթ:

Միևնույն ժամանակ համեմատաբար սահմանափակ է.

- LMS համակարգի ակտիվ օգտագործումը – 3%
- Թվային ինքվիզների կիրառումը – 14%

Սա ևս մեկ անգամ ընդգծում է թվային ուսուցման գործիքների զարգացման անհրաժեշտությունը:

**12. Դասախոսների արձագանքի ամփոփում**

*Հարցման արդյունքները տես Հավելված 4-ում*

Դասախոսների կողմից առավել հաճախ նշված դրական կողմերն են.

- Գործնական օրինակների օգտակարություն – 93%
- Ակտիվ քննարկումներ ներգրավվածություն – 90%
- Դասախոսի աջակցող մոտեցում – 79%
- Դասընթացի կառուցվածք – 69%

Սա վկայում է, որ դասախոսները բարձր են գնահատում գործնական և ինտերակտիվ ուսուցման մոտեցումները:

Միաժամանակ նշվել են որոշ բարելավման ուղղություններ.

- Թվային գործիքների ավելի լայն կիրառման կարիք – 52%

- Դասերի ինտերակտիվության բարձրացում – 41%
- Դասընթացի ծանրաբեռնվածություն – 38%

Այս արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողները ակնկալում են ավելի ժամանակակից և տեխնոլոգիական ուսուցման միջավայր:

**13. Առաջարկվող բարելավումներ հաջորդ տարում**

*Հարցման արդյունքները տես Հավելված 5-ում*

Դասախոսները հաջորդ տարվա համար առաջարկել են մի շարք բարելավումներ.

Ամենահաճախ նշված ուղղությունները.

- Ակտիվ ուսուցման մեթոդների ընդլայնում – 76%
- Նոր դեպքերի և օրինակների ավելացում – 55%
- Դասընթացի ծավալի վերանայում – 55%
- Բովանդակության թարմացում – 52%
- Թվային գործիքների օգտագործում – 38%

Այս առաջարկները ցույց են տալիս, որ դասախոսները ձգտում են զարգացնել հատկապես.

- Պրակտիկ ուղղվածությունը
- Ինտերակտիվ մեթոդները
- Թվային կրթական միջավայրը

**14. Մասնագիտական զարգացման կարիք**

*Հարցման արդյունքները տես Հավելված 6-ում*

Դասախոսների մասնագիտական զարգացման հիմնական պահանջները կապված են հետևյալ ոլորտների հետ.

- Թվային հարթակներ – 55%
- Հաղորդակցություն և ուսանողների ներգրավում – 24%
- Դասավանդման մեթոդաբանություն – 17%
- Գնահատման գործիքներ – 17%

Միևնույն ժամանակ 38% նշել են, որ ներկայումս վերապատրաստման կարիք չունեն, ինչը կարող է վկայել մասնագիտական բավարար ինքնավստահության մասին:

Այնուամենայնիվ թվային հմտությունների պահանջը ցույց է տալիս կրթական տեխնոլոգիաների ինտեգրման անհրաժեշտությունը:

15. **Բարելավման կարճ պլան** (Նշեք մեկ կամ երկու բարելավման ուղղություն, որոնք ցանկանում եք իրականացնել հաջորդ տարում)

*Հարցին պատասխանել է 14 դասախոս, որոնց պատասխանները տես Հավելված 7-ում*

Դասախոսների առաջարկած անհատական բարելավումները կարելի է խմբավորել մի քանի հիմնական ուղղությունների շուրջ.

1. **Ուսուցման մեթոդների զարգացում**
- Խմբային աշխատանքներ
- Սիմուլյացիոն վարժանքներ
- Ինտերակտիվ քննարկումներ

2. **Թվային գործիքների օգտագործում**
- Առցանց հարթակներ
- Թվային ուսուցման մեթոդներ
- Առցանց գնահատում

3. **Բովանդակության արդիականացում**
- Նոր գիտական տվյալների ինտեգրում
- Միջազգային փորձի կիրառություն
- Նոր թեմաների ներառում

Այս առաջարկները վկայում են, որ դասախոսները նպատակ ունեն կրթական գործընթացը դարձնել ավելի ժամանակակից և գործնական:

16. **Թվարկեք քայլեր վերոնշյալ բարելավումն իրականացնելուն նպաստելու համար**

*Հարցին պատասխանել է 11 դասախոս, որոնց պատասխանները տես Հավելված 8-ում*

Դասախոսների պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջարկվող քայլերը հիմնականում ուղղված են կրթական գործընթացի որակի բարձրացմանը և ուսուցման բովանդակության արդիականացմանը: Առաջարկները ներառում են ինչպես ուսուցման մեթոդների կատարելագործում, այնպես էլ դասախոսների մասնագիտական զարգացման և նոր գիտելիքների ներգրավման անհրաժեշտություն:

Միաժամանակ առանձնանում է նաև գործնական և միջազգային փորձի ավելի ակտիվ ներառման կարևորությունը, ինչպես նաև ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանն ուղղված քայլերը:

17. **Սպասվող արդյունք** (ինչը կբարելավվի միջոցառման իրականացման դեպքում)

*Հարցին պատասխանել է 12 դասախոս, որոնց պատասխանները տես Հավելված 9-ում*

Առաջարկվող միջոցառումների իրականացումը, ըստ դասախոսների, կարող է ապահովել հետևյալ արդյունքները.

- ուսանողների քննադատական և վերլուծական մտածողության զարգացում
- գործնական հմտությունների ձևավորում
- դասընթացների արդյունավետության բարձրացում
- ժամանակակից գիտելիքների փոխանցում
- թվային տեխնոլոգիաների ինտեգրում կրթական գործընթացում

Այս սպասվող արդյունքները համապատասխանում են ժամանակակից բարձրագույն կրթության հիմնական նպատակներին:

## Եզրակացություն

Հարցման արդյունքների համապարփակ վերլուծությունը ցույց է տալիս, որ «Առողջապահության կազմակերպում և կառավարում» մագիստրոսական ծրագրում դասավանդումը իրականացվում է բավական բարձր մասնագիտական և մեթոդական մակարդակով: Դասախոսները մեծ ուշադրություն են դարձնում դասընթացների կառուցվածքին, գործնական օրինակների օգտագործմանը և ուսանողների ակտիվ ներգրավվածությանը:
Միևնույն ժամանակ զարգացման հիմնական ուղղությունները կապված են.

- թվային կրթական տեխնոլոգիաների ակտիվ կիրառման
- ինտերակտիվ ուսուցման մեթոդների ընդլայնման

- կրթական բովանդակության շարունակական արդիականացման
- ուսանողների նախնական պատրաստվածության տարբերությունների հաղթահարման

Այս ուղղություններով իրականացվող բարելավումները կարող են նպաստել ծրագրի արդյունավետության, միջազգային մրցունակության և կրթական որակի հետագա բարձրացմանը:

**Հավելված 1**

**Իմ դասավանդման ուժեղ կողմերը** *(նշել բոլոր կիրառելի պատասխանները)*

| | |
|---|---|
| Դասընթացի հստակ կառուցվածք և տրամաբանական հաջորդականություն | 93% |
| Ուսուցման նպատակների և գնահատման համապատասխանություն | 72% |
| Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառում | 76% |
| Ուսանողների ներգրավվածության խթանում | 90% |
| Իրական հանրային առողջապահական օրինակների և դեպքերի օգտագործում | 90% |
| Քննադատական մտածողության զարգացում | 79% |
| Հստակ և հասկանալի բացատրություններ | 86% |
| Ժամանակի արդյունավետ կառավարում | 69% |
| Կառուցողական և ժամանակին հետադարձ կապ | 69% |
| Ակադեմիական և մասնագիտական էթիկայի պահպանում | 83% |
| Թվային և տեսողական նյութերի արդյունավետ օգտագործում | 62% |
| Ապացուցահեն և արդի գիտական աղբյուրների ինտեգրում | 86% |
| Այլ | 3% |

**Հավելված 2**

**Դասավանդման ընթացքում հանդիպած դժվարություններ** *(նշել բոլոր կիրառելի պատասխանները)*

| | |
|---|---|
| Ուսանողների ներգրավվածության ցածր մակարդակ | 14% |
| Ժամանակի սահմանափակություն՝ նյութը ամբողջությամբ ներկայացնելու համար | 48% |
| Ուսանողների նախնական գիտելիքների անհավասար մակարդակ | 66% |
| Մեծ խմբեր / ծանր դասավանդման բեռնվածություն | 24% |
| Գնահատման և աշխատանքների ստուգման բարդություններ | 3% |
| Թվային կամ տեխնիկական խնդիրներ | 7% |
| Առցանց ուսուցման ժամանակ կապի խնդիրներ | 3% |
| Լսարանային տեխնիկական խնդիրներ | 14% |
| Ուսանողների մոտիվացիայի կամ հաճախելիության խնդիրներ | 35% |
| Ուսուցման նյութերի կամ ռեսուրսների սահմանափակ հասանելիություն | 7% |
| Այլ | 7% |

## Հավելված 3

**Նորարարություններ/փոփոխություններ, որոնք իրականացվել են այս տարի** *(նշել բոլոր կիրառելի պատասխանները)*

| | |
|---|---|
| Նոր ուսուցման մեթոդների ներդրում | 45% |
| Դեպքահեն (case-based) ուսուցման կիրառություն | 45% |
| Թվային քվիզների/հարցումների օգտագործում (օր.՝ Google Forms, Kahoot | 14% |
| LMS գործիքների ակտիվ օգտագործում | 3% |
| Խմբային աշխատանքների և նախագծերի ներդրում | 38% |
| Շրջված դասարան» (flipped classroom) տարրերի կիրառում | 17% |
| Ինտերակտիվ գործունեությունների իրականացում (դեբատ, դերախաղ) | 59% |

| | |
|---|---|
| Դասընթացի ծրագրի կամ նյութերի թարմացում | 66% |
| Գնահատման մեթոդների վերանայում | 24% |
| Գործնական օրինակների ավելացում | 66% |
| Նոր գիտական տվյալների ինտեգրում | 48% |
| Ուսանողների արձագանքի հիման վրա փոփոխությունների իրականացում | 52% |
| Այլ | 0% |

## Հավելված 4

**Դասախոսների արձագանքի ամփոփում** *(նշել բոլոր կիրառելի պատասխանները)*

Դրական արձագանքներ

| | |
|---|---|
| Դասընթացի հստակ և կառուցված ներկայացում | 69% |
| Դասախոսի մատչելիություն և աջակցող մոտեցում | 79% |
| Գործնական օրինակների օգտակարություն | 93% |
| Ակտիվ քննարկումներ և ներգրավվածություն | 90% |
| Հստակ գնահատման չափանիշներ | 41% |
| Ժամանակին տրամադրված հետադարձ կապ | 55% |

Բարելավման ոլորտներ

| | |
|---|---|
| Դասընթացի ծանրաբեռնվածություն | 38% |
| Գնահատման մեթոդների հստակեցման կարիք | 24% |
| Ավելի շատ գործնական օրինակների անհրաժեշտություն | 28% |
| Թվային գործիքների կիրառման ընդլայնում | 52% |
| Դասերի ինտերակտիվության բարձրացում | 41% |
| Խորհրդատվական ժամերի ավելացում | 24% |

## Հավելված 5

**Առաջարկվող բարելավումներ հաջորդ տարում** *(նշել բոլոր կիրառելի տարբերակները)*

| | |
|---|---|
| Դասընթացի բովանդակության թարմացում | 52% |
| Նոր դեպքերի և օրինակների ավելացում | 55% |
| Ակտիվ ուսուցման մեթոդների ընդլայնում | 76% |
| Գնահատման չափանիշների և ռուբրիկաների հստակեցում | 24% |
| Թվային գործիքների կիրառում | 38% |

| | |
|---|---|
| Դասընթացի ծավալի վերանայում (նվազեցում/ավելացում) | 55% |
| Արտաքին մասնագետների / հյուր դասախոսների ներգրավում | 28% |
| LMS հարթակի ավելի արդյունավետ օգտագործում | 14% |
| Ուսանողների հետ խորհրդատվությունների ընդլայնում | 28% |
| Դասախոսական մասնագիտական զարգացման ծրագրերին մասնակցություն | 35% |
| Այլ | 7% |

**Հավելված 6**

**Մասնագիտական զարգացման կարիք**

Որ ոլորտներում կցանկանայիք աջակցություն/վերապատրաստում ստանալ *(Նշել բոլոր կիրառելի տարբերակները)*

| | |
|---|---|
| Դասավանդման մեթոդաբանություն | 17% |
| Գնահատում և փորձարկման գործիքներ | 17% |
| Թվային հարթակներ | 55% |
| Գիտահետազոտական և տպագրական հմտություններ | 17% |
| Հաղորդակցություն և ուսանողների ներգրավում | 24% |
| Աջակցության կամ վերապատրաստման կարիք այս պահին չունեմ | 38% |

**Հավելված 7**

**Բարելավման կարճ պլան** (Նշեք մեկ կամ երկու բարելավման ուղղություն, որոնք ցանկանում եք իրականացնել հաջորդ տարում)

1. Խմբային աշխատանքների ավելացում և սիմուլյացիոն վարժանքների ընդգրկում ուսումնական ծրագրի մեջ:
2. Անգլերեն ուսուցման ներառում, օտար լեզվի գիտելիքներ
3. Ավելի շատ նյութերի տրամադրում
4. Կմշակեմ ամենօրյա քվիզեր անհատական ստուգելու համար, քանի որ խմբային աշխատանքներում դժվար է անհատական գնահատական տալ

5. Դասընթացի բովանդակության թարմացում
6. Ծրագրի ընդլայնում շրջակա միջավայրի բարելավմանը վերաբերող հարցերի շուրջ:
7. Ինտերակտիվ քննարկումներում բոլոր ուսանողների հնարավորինս հավասար ներգրավում.քննադատական մտածելակերպի խթանման գործիքակազմերի ընդլայնում
8. Ցիկլի օրերի ավելացում
9. Թվային գործիքների կիրառման ավելի լայն հնարավորություն
10. Ընդլայնել թվային հարթակի օգտագործումը
11. Նորարարական թվային մեթոդների կիրառում
12. Օգտագործել թվային գործիքներ
13. Թարմացնել նյութերը
14. Կիրառել նորարարական /ինտերակտիվ ուսուցման մեթոդներ: Թվային գործիքները (առցանց գործիքներ) օգտագործել ավելի արդյունավետ:

## Հավելված 8

**Թվարկեք քայլեր վերոնշյալ բարելավումն իրականացնելուն նպաստելու համար**

1. Հյուր մասնագետների ներգրավում սիմուլյացիոն վարժանքների մեջ:
2.Գրականության վերլուծություն
3. Կավելացվեն միջազգային փորձի վերաբերյալ վերջին հրապարակումներից նյութեր, ինչպես նաև սեփական փորձից բխող օրինակների
4. Ավելացնել դասաժամերը, ինչը հնարավորություն կտա ներկայացնել միջազգային մոտեցումները հանրային առողջության պահպանման հարցում՝ (Environmental Protection and Public Health):
5. Ապահովել հակառակ կարծիքների "բախում" քննարկումների ժամանակ. "կեղծ պնդումների" միջոցով քննադատական մտածելակերպի խթանում
6.Պարզապես ցիկլը մեկ շաբաթից երկու շաբաթ ավելացնել
7.Մասնակցել համապատասխան դասընթացին
8.Ինքնուսուցում
9.Անցնել դասընթաց

10. Ուսումնասիրել բոլոր նոր բարեփոխումները առողջապահության ոլորտում
11.Ինքնակրթություն, մասնակցություն հասանելի/առաջարկվող վերապատրաստման դասընթացներին:

## Հավելված 9

**Սպասվող արդյունք (ինչը կբարելավվի միջոցառման իրականացման դեպքում)**

1. Գործնական օրինակներով և սիմուլյացիոն իրավիճակների վերլուծությամբ՝ ուսանողների մոտ խթանել անալիտիկ և քննադատական մտածողությունը և գիտական փաստի վրա կառուցված օբյեկտիվ որոշումներ կայացնելու ունակությունը:
2.Դասընթացի արդյունավետության բարձրացում
3.Ուսանողները հստիպված կլինեն ամեն օր կրկնել անցածը, և ավելի լավ կպատրաստվեն վերջնական թեստին
4.ՈՒսանողների մոտ ավելի ժամանակակից համակարգային գիտելիքների ձևավորում
5.Մագիստրոսական ծրագիրն ավելի մրցունակ և ծավալուն կլինի, եթե ներառվի նաև Հանրային առողջության վրա ազդող նշված կարևորագույն խնդիրը:
6.Ուսանողների մոտ "ճիշտ կամ սխալ" եզրույթների քննադատական մոտեցման ձևավորում, տվյալ թեմայի/հարցի վերաբերյալ ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու և դա վերլուծելու կարողությունների ամրապնդում
7.Ավելի շատ ժամանակ թեմաների քննարկման համար, և, հետևաբար,դաօգտակար կլինի ուսանողների համար
8.Թվային հարթակի ավելի ակտիվ կիրառում
9.Ժամանակակից դասավանդման մեթոդների կիրառում լսարանում
10.Դասընթացի հագեցվածություն թվային գործիքներով
11.Կմատուցվեն արդի գիտելիքներ, այն կբերի ավելի լավ կադրերունենալուն
12.Նորագույն տեխնոլոգիաների արդյունավետ կիրառում ուսուցման պրոցեսում: